

**Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐԻ**

**«14» ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2012 Թ. N 260-Ա ՀՐԱՄԱՆԻՑ**

**ԱՐԱԲԿԻՐ ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆՈՏԱՐ ՍՈՒՍԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածով, 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Լիդա Հայրապետյանի դիմումը՝ Արաբկիր նոտարական տարածքի նոտար Սուսաննա Դանիելյանի կողմից իրականացված նոտարական գործողությունների արդյունքում իր իրավունքները խախտվելու մասին և դրա հիման վրա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչության կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքներով ներկայացված տեղեկանքը, ինչպես նաև աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչության պետ Ն. Փանոսյանի զեկուցագիրը.

**Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝**

Արաբկիր նոտարական տարածքի նոտար Սուսաննա Դանիելյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ:

**Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**